Հայերը (պատ. խմբ.՝ Լ. Մ. Վարդանյան, Հ. Գ. Սարգսյան, Ա. Ե. Տեր-Սարգսյանց), ՌԳԱ Ն. Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգաբանության և մարդաբանության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. – *Մոսկվա,* «Наука» *հրատ., 2012, 648 էջ, « Ժողովուրդներ և մշակույթներ» մատենաշար:*

Армяне (отв. ред. Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц), Ин-т этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН; Ин-т археологии и этнографии НАН РА. – М., Изд-во «Наука», 2012, 648 с., серия «Народы и культуры».

Լույս է տեսել «Ժողովուրդներ և մշակույթներ» հիմնարար ազգաբանական մատենաշարի հերթական հատորը՝ նվիրված աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի պատմաազգագրական նկարագրին, ում փաստացի պատմությունը մի քանի հազարամյակներով է հաշվվում:



«Հայերը» ժողովածուի պատասխանատու խմբագիրներն են պ. գ. դ. Լ. Մ. Վարդանյանը, պ. գ. թ. Հ. Գ. Սարգսյանը, պ. գ. դ. Ա. Ե. Տեր-Սարգսյանցը: Այն հրատարակության են երաշխավորել ՀՀ - ԳԱԱ թղթակից անդամ Լ. Ա. Աբրահամյանը, ՌԳԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ. գ. դ. Լ. Ա. Չվրրը:

Գրախոսվող գրքի առաջաբանում «Ժողովուրդներ և մշակույթներ» մատենաշարի պատասխանատու խմբագիրներ Վ. Ա. Տիշկովը և Ս. Վ. Չեշկոն կարևորում են տարբեր ոլորտների մասնագետներին հավաքելու և հեղինակային մեծ խմբով մեկ ընդհանուր գաղափարի շուրջը համախմբելու ուղղությամբ Լ. Մ. Վարդանյանի գործադրած ջանքերը: Հատկապես շնորհակալության են արժանացել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ՝ պ. գ. դ. Է. Խ. Պետրոսյանը և պ. գ. թ. Ս. Գ. Հոբոսյանը, ովքեր աջակցել են հատորի հայեցակարգի և կառուցվածքի մշակման, նյութերի ընտրության ու խմբագրման աշխատանքներին:

Հատորի հրատարակությունը իրականացվել է մարդկային ռեսուրսների զարգացման «Ֆյունիկ» համահայկական բարեգործական ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

Սույն աշխատանքը բաղկացած է առաջաբանից, ներածությունից, 11 գլուխներից՝ «Հայերի էթնիկական և քաղաքական պատմությունը», «Տնտեսական զբաղմունքները», «Արհեստները», «Կենսապահովման մշակույթը», «Սոցիալական կառուցվածքն ու հասարակական կենցաղը», «Ընտանիքն ու ընտանեկան կենցաղը», «Հավատալիքները», «Ժողովրդական մշակույթը», «Ժողովրդական գիտելիքները», (իմացություններ) «Պրոֆեսիոնալ մշակույթը», «Ժամանակակից էթնոմշակութային գործընթացները»: Թեմատիկ առանձնացումներն ինքնին վկայում են նյութի հետազոտական խորքայնության և գիտական համակարգվածության մասին:

Հատորի հեղինակային կազմում հիմնականում ընդգրկված են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցները: Բացի այդ՝ ներգրավվել են Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ պատմության, արվեստի ինստիտուտների, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

կենտրոնի (ք. Գյումրի), Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան), Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, ՀՀ մշակույթի նախարարության Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի համապատասխան մասնագետները: Ուզում ենք հատուկ շեշտել մի կարևոր իրողություն, որն առկա է բոլոր ուսումնասիրություններում. հատորում ներկայացված հոդվածներն արտահայտում են հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ մասնագիտական շրջանակներում ընդունված տեսակետները:

Աշխատության մեջ հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հնագույն և հին շրջաններին վերաբերող բաժինը սկսվում է հնագիտական պեղումներով ձեռք բերված նորագույն տվյալների մասին տեղեկություններով: Վերջին տարիներին Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում կատարված պեղումների շնորհիվ զգալիորեն համալրվել է հայոց հնագույն և հին պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Հանգամանք, որ հնարավորություն է տալիս նորովի հայացք նետելու հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի ձևավորման ակունքներին: Լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում պեղված մի շարք հուշարձանների տվյալները (Հալլան Չեմի, Չայոնու թեփե և այլն) վկայում են, որ Եփրատի և Տիգրիսի վերին հոսանքներին հարող տարածքը մ. թ. ա. X–VIII հազարամյակներում վաղ երկրագործական մշակույթի ձևավորման նշանակալից օջախ է հանդիսացել, որտեղից էլ արտադրող տնտեսությանը բնորոշ հմտություններն աստիճանաբար տարածվել են լեռնաշխարհի այլ շրջաններ: Մ. թ. ա. VII – V հազա-րամյակներում վաղ երկրագործական հասարակությունների մասին վկայող բնակատեղիները համատարած հանդիպում են լեռնաշխարհի գրեթե բոլոր շրջաններում:

Հասարակական զարգացումների մի նոր՝ կոմպլեքսային հասարակությունների ձևավորման ու արմատավորման փուլի մասին են վկայում մ. թ. ա. IV հազ. կես–III հազ. կեսն ընկած ժամանակահատվածով թվագրվող (վաղ բրոնզի դար) հուշարձանները: Դրանք, այսպես կոչված, «կուր-արաքսյան» կամ «շենգավիթյան» հնագիտական մշակույթին վերագրվող բնակատեղիներն ու դամբարանադաշտերն են, որոնց պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ լեռնաշխարհն այս փուլից սկսած հանդես է գալիս համասեռ մշակութային միջավայր կերտող, զարգացած տնտեսություն և սոցիալական բարդ կազմ ունեցող հասարակություններով:

Լեռնաշխարհի տարբեր հատվածներում պեղված միջին բրոնզեդարյան հուշարձանների տվյալները վկայում են, որ մ. թ. ա. III հազ. կեսերից մինչև II հազ. կեսն ընկած ժամանակահատվածը բնորոշվում է հասարակական զարգացումների տեմպերի արագացմամբ՝ մշակութային և սոցիալական միջավայրում նկատվող արմատական փոփոխություններով: Քարաշամբում, Լոռի Բերդում, Վերին Նավերում պեղված « արքայական դամբարանները» մ. թ. ա. III հազ. վերջին քառորդ–մ. թ. ա. II հազ. սկզբն ընկած ժամանակահատվածում ձևավորված վաղ պետական կազմավորումների հնագիտական վկայությունների լավագույն օրինակներից են: Ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանում (մ. թ. ա. 1500–800 թթ.) մեծ քանակով ամրոց բնակատեղիների, ընդարձակ քաղաքային բնակավայրերի դամբարանադաշտերի առանձնացված հատվածներում խմբավորվող «արքայական թաղումների» հանդես գալը վկայում են քաղաքային քաղաքակրթությանը բնորոշ հատկանիշների, սոցիալական միջավայրում կատարվող փոփոխությունների մասին: Այս փոփոխությունները զուգորդվում են մետաղագործության աննախադեպ զարգացման, էլիտար մշակույթի ձևավորման մասին վկայող փաստերով: Մ. թ. ա. XIII–XII դդ. հանդես են գալիս «զինվորների թաղումները», զենքի նմուշներում հաճախ

հանդիպում են երկաթից պատրաստված օրինակները, ինչը վկայում է հասարակության «միլիտարիզացման», զինվորական խավի ձևավորման մասին:

Համահեղինակները հանգամանալից ներկայացնում են Հին և Միջնադարյան Հայաստանի՝ Վանի թագավորության, Երվանդյան, Արտաշիսյան, Արշակունիների հարստությունների շրջանի քաղաքային խոշոր կենտրոնների, մայրաքաղաքների, ամրոցների պեղումների արդյունքները և դրանցով վերականգնվող հասարակական, տնտեսական, մշակութային կյանքի բազմաշերտ դրսևորումները (Պ. Ս. Ավետիսյան, Հ. Ա. Մելքոնյան, Ա. Զ. Մարգարյան):

Հատուկ ուշադրության են արժանացել հայերի պատմամարդաբանական տվյալները, ըստ որոնց՝ արմենոիդ մարդաբանական տիպի ձևավորումը վերաբերում է համեմատաբար ավելի վաղ ժամանակներին, քան այն ժամանակաշրջանը, որի հետ կապում են հայ ժողովրդի կազմավորման սկիզբը (Մ. Մ. Գերասիմովա):

Հայկի և Արամի պաշտամունքը հայոց մեջ սկզբնավորվել է նրա ցեղային համախմբման վաղ շրջանում և շարունակվել գոյատևել նաև հետագայում. առաջինը կապված է հայերի ինքնանվանմանը, երկրորդը սերում է հայերի մեջ ձուլված նախահայ արիմ ցեղանունից (ըստ հունական ավանդության՝ Արմենիոս), որով կոչում են օտարները հայերին՝ արմեն, արմենի (Ա. Ե. Պետրոսյան):

Քննվել են հայ ժողովրդի պատմական զարգացման հիմնական փուլերը՝ սոցիալ-մշակութային և էթնոքաղաքական գործընթացների համապատկերում (Յու. Լ. Հովսեփյան, Ա. Ե. Տեր-Մարգսյանց), հայոց լեզուն և բարբառները, որոնք՝ որպես ժողովրդի մտավոր մշակույթի բաղկացուցիչ, արտացոլում են իրեն կրող ժողովրդի կենցաղի, հոգեկերտվածքի ու բարքերի տարրերը (Լ. Ս. Հովսեփյան): Այնուհետև անդրադարձ է կատարվում հայ բնակչության թվի շարժընթացին ու տարաբնակեցման խնդիրներին (Հ. Գ. Սարգսյան):

Հատորի համապատասխան գլուխներում և ենթագլուխներում հաջորդաբար ներկայացվում են տնտեսական զբաղմունքների մեջ մտնող՝ դաշտամշակությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, ձիթահանությունը, հաղորդակցության ու կապի միջոցները (Ս. Գ. Հոբոսյան, Մ. Ռ. Գաբրիելյան, Յու. Ի. Մկրտումյան, Ա. Ս. Պետրոսյան, Լ. Ն. Պետրոսյան, Ա. Ե. Տեր-Մարգսյանց), ինչպես նաև արհեստները՝ բրուտագործությունը, դարբնությունը, զինագործությունը, ասեղնագործությունն ու գորգագործությունը (Ա. Ա. Հովսեփյան, Ա. Զ. Թադևոսյան, Գ. Թ. Աղանյան, Ա. Ա. Քալանթարյան, Կ. Ռ. Բազեյան, Ա. Ա. Պողոսյան):

Մեղմ շարադրանքի մեջ շատ արժեքավոր տեղեկություններ են պարունակում կենսապահովման մշակույթի՝ բնակավայրի ու բնակարանի (Հ. Տ. Մարության), սննդի (Ա. Ե. Տեր-Մարգսյանց), զգեստի և զարդարանքի (Ս. Ա. Պողոսյան, Լ. Մ. Վարդանյան, Ա. Ա. Ստեփանյան) վերաբերյալ հրապարակումները: Վերջիններիս գալիս են լրացնելու սոցիալական կառուցվածքի և հասարակական կենցաղի (Մ. Վ. Հակոբյան, Կ. Վ. Սեղբոսյան), ինչպես նաև ավանդականի և արդիականի համապատկերում՝ տոնական մշակույթի բազմազան դրսևորումները (Հր. Ս. Խառատյան, Ս. Ս. Մկրտչյան):

Հասարակությունը երկարատև փոխհարաբերությունների ընթացքում մշակում է իր համար վարվելակերպի զանազան նորմեր, որոնց մի զգալի մասը վերածվում է կենցաղային առանձին բնագավառները կարգավորող սովորույթների: Ինչպես երևում է փաստական նյութերից ու գիտնականների հետևություններից, ազգակցական համակարգն ու անվանադրությունը, ամուսնահարսանեկան ու հուղարկավորության ծեսերը պահպանել և մեր օրերն են հասցրել տոհմացեղային կարգերին ներհատուկ հասարակական հարաբերությունների տարրերը (Լ. Մ. Վարդանյան, Թ. Զ. Զաքարյան, Բ. Ե. Զաքարյան, Ս. Գ. Մելիքյան, Ն. Մ. Մարգարյան, Ա. Ե. Տեր-Մարգսյանց):

Գրքի «Հավատալիքները» գլխում սեղմ և ծանրակշիռ բնութագրականով ներկայացված են հայոց նախնադարյան դիցարա-

նը, ցեղային աստվածություններն ու նրանց պաշտամունքային վայրերը (Գ. Դ. Վարդումյան), հայ բանավոր ավանդության մեջ պահպանված առասպելաբանական նախաշերտերը, հնագույն զրույցների և հավատալիքների գրեթե ողջ համակարգը, դրանց փոխառնչությունների ու յուրահատկությունների քննությունը հարևան ժողովուրդների ավանդական մշակույթի համատեքստում (Ս. Բ. Հարությունյան), ինչպես նաև Արշակունյաց թագավորության խոշոր գահակալ Տրդատ III-ի օրոք՝ 301 թ., աշխարհում առաջինը քրիստոնեության պետականորեն ընդունման, Հայաստանում այդ դավանանքի ոչ միայն պետական, այլև ազգային կրոնի վերափոխման և նրա հիման վրա ողջ միջնադարյան հայ հոգևոր մշակույթի ծաղկման, հայ ինքնության պահպանման ու երկրի կյանքում եկեղեցու խաղացած հսկայական դերակատարության պատմությունը (Է. Խ. Պետրոսյան):

Դրան հաջորդող «Ժողովրդական մշակույթ» գլուխն ընդգրկում է վիպական բանահյուսության մեծ ու փոքր ժանրերը, հատկապես հայոց ազգային դյուցազնավեպը՝ «Սասնա ծռերը», հմայական բանահյուսության տարատեսակները (անեծք-օրհնանքներ, երդումներ, հմայական աղոթքներ), ասույթաբանական բանահյուսության նմուշները, հայկական ժողովրդական հեքիաթները, ծիսական, ինչպես նաև ռազմի ու զինվորի երգերը (Ս. Բ. Հարությունյան, Ա. Ս. Ղազիյան):

Շարունակության մեջ հակիրճ, բայց խորքային շարադրանքով ներկայացվում են ժողովրդական պարային ֆոլկլորը (Ժ. Կ. Խաչատրյան), թատերական ֆոլկլորը (Է. Խ. Պետրոսյան), ինչպես նաև ժողովրդական երաժշտությունն ու գործիքները՝ իրենց տարատեսակ դրսևորումներով ու սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթներով (Կ. Մ. Խուդաբաշյան, Ա. Օ. Բաղդասարյան, Ա. Ա. Կիրակոսյան):

Աշխատության մեջ տեղ են գտել նաև ժողովրդական բժշկության, հիգիենայի և բաղնիքների (Ա. Մ. Մինասյան, Կ. Վ. Սեղբոսյան, Ս. Ա. Պողոսյան), բուժման, գուշակության, հմայության (Յու. Յու. Անտոնյան, Ա. Ռ. Իսրայելյան), ինչպես նաև ձեռագիր գրքերի ու մանրանկարչության, գիտության և կրթության (Է. Խ. Պետրոսյան, Հ. Օ. Խաչիկյան), բժշկության (Ս. Ա. Վարդանյան), զինանիշագիտության (Ա. Ա. Դաբաղյան), ճարտարապետության (Մ. Մ. Հասրաթյան) մասին ուշագրավ տեղեկություններ:

Աղբյուրագիտական, հնագիտական, պատմամշակութային և իմաստաբանական քննությամբ պարզաբանվում են խաչքարի՝ հայ ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկի տեղն ու դերը ազգամշակութային կենսընթացում (Հ. Լ. Պետրոսյան):

«Հայերը» ուսումնասիրությունն ավարտվում է ժամանակակից էթնոմշակութային գործընթացներիների սոցիալ-մշակութային բնութագրությամբ (Մ. Ռ. Գաբրիելյան), արտագնացության (Մ. Վ. Գալստյան), հայկական գաղթօջախների (Է. Լ. Մելքոնյան), Ռուսաստանում ապրող հայերի մասին հիմնավոր տեղեկատվությամբ, հայրենիք-սփյուռք հարաբերությունները համազգային շահերի վրա խարսխելու անհրաժեշտությամբ (Ա. Ե. Տեր-Սարգսյանց):

Աշխատության մեջ ընդգրկված նյութերն աչքի են ընկնում հարցադրումների բազմակողմանի քննությամբ, ուշագրավ վերլուծություններով, եզրահանգումների հետևողական հիմնավորմամբ ու փաստարկմամբ, ինչն էլ, կարծում ենք, կնպաստի հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին վերաբերող հիմնախնդիրների գիտական հետազոտման շարունակականությանը:

«Ժողովուրդներ և մշակույթներ» հիմնարար ազգաբանական մատենաշարի «Հայերը» հատորը կոլեկտիվ գիտական աշխատանք է, որն իրականացվել է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Ն. Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգաբանության և մարդաբանության ու Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտների համատեղ ջանքերով:

«Հայերը» հատորում հայ ժողովրդի պատմաազգագրական ծանրակշիռ ժառան-

գությունն ընթերցող լայն շրջանակներին է ներկայացված եվրոպական և ռուսական քաղաքակրթական դպրոցների կողմից հաստատագրված բարձրագույն գիտական չափանիշներով:

Հատորը հագեցած է 360-ից ավելի լուսանկարներով: Դրանք ձեռք են բերվել խմբարշավների ընթացքում և անձնական արխիվներից ու առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Ուսումնասիրության վերջում գետեղված ազգագրական տերմինների (գլոսարի) բացատրական բառարանը, օգտագործված գրականության ցանկը, հեղինակների վերաբերյալ տվյալները, ՀՀ - մարզերի արդի վարչատարածքային բաժանումները և հապավումների ցանկերն ավելի են ընդլայնում աշխատության շրջանակները՝ այն դարձնելով խիստ հագեցած:

«Հայերը» աշխատության միջոցով գիտական շրջանառության մեջ են դրվում վերջին 20 տարիների ընթացքում հայ ժողովրդի պատմության ու մշակույթի վերաբերյալ Հայաստանում և Ռուսաստանում կուտակված փաստացի հարուստ նյութն ու դրանից բխող եզրահանգումները, որոնք հնարավորություն են ընձեռում գրախոսվող աշխատանքը դարձնելու մշակութաբանական գերակա ուղղություն պատմաքաղաքական ընդհանուր գործընթացներում:

Վերջում ավելորդ չէ նշել, որ հատորի լույս ընծայումը Մոսկվայում՝ Հայկական տպագրության 500-ամյա հոբելյանին նվիրված տարում, հասարակական, մշակութային մեծ հնչեղություն ունի, ինչն էլ խորհրդանշում է Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների ու գիտական շրջանակների միջև վաղեմի կապերն ու համագործակցությունը:

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ